

դարձեալ, երբ մտաւ Դուին եւ մօտեցաւ կաթողիկոսարանին եւ տեսաւ բոլոր նախարարաց գունդագունդ ծառաները եւ թիկնապահ հեծելազօրքը հրապարակին առջեւ, որոց առջին սասնցի լեռնականն անարդ արարած մ'էր, երբ դռներն ներս մտնելու համար պետք էր խօսք չի հասկցող ամրագլուխ դռնապանին հետ վիճել եւ համոզելու համար շատ մը լեզու թափել, եւ երբ մեծ դահլիճին դռանն առջեւ հասնելով նոյն արարողութիւնը աւելի հնարագիտութեամբ պետք եղաւ գործածել՝ ան ատեն ճշմարտապէս յոգնութիւն իմացաւ:

Բայց արդար լինելու համար պետք է ըսել թէ այդ դահլիճին մէջ գումար եալ ժողովը գոնէ ըստ երեւոյթին շատ ծանրակշիռ էր, հոն ժողովեալ էին բացի կ'աթողիկոսեն՝ Սմբատ Բագրատունի Սպարապետ Զայոց եւ իր որդին Աշոտ իշխան եւ նոյն Բագրատունեաց տոհմէն Աշոտ եւ Դաւիթ որդիք Բագարատայ, որ ի Բաղդատ կալանաւոր էր, Վասպուրականի Արծրունեաց տունէն Աշոտ մեծ իշխանին տեղ իւր եղբայրը Գուրգէն եկած էր փոխանորդաբար: Սիւնեաց նախարարութեան տունէն Վասակ մեծ նախարարը ներկա էր իւր իշխանօք. հոն էին իշխանն Գարդմանաց Կտրիճ, իշխանն Աղուանից Եսայի, իշխանն Ուտեացունց Ստեփաննոս, իշխանն Արցախայ Ատրներսեհ Տէրն խաչնոյ, եւ ուրիշ երեւելի իշխանք եւ իշխանագունք եւ շատ արքեպիսկոպոսք, եպիսկոպոսք գանազան գաւառաց Զայաստան երկրի:

Կաթողիկոսն Յովհաննէս իւր աջ կողմը Սմբատ Սպարապետ եւ ձախը Վասակ Սիւնիկն ունելով, սկսաւ երկայն պատմութիւն մը ուր գլխաւոր եւ տիրող իմաստն էր թէ՝ «Աստուած զայրացեալ Զայաստանի բնակչաց չարագործութեանց եւ մեղաց համար, իւր բարկութիւնն անպակաս էր ըրեր հայ ազգին վրայէն, ուստի պետք էր ապաշխարել եւ մեղայ գոչել, եւ շուտով դեսպան դրկել Բաղդատ ամիրապետին, որ աստուծոյ բարկութեան գաւազանն էր, եւ հանդարտեցնել զանի ընծայիւք ու պատարագոք, որպէսզի սասնցունց գործած յիմարութեան պատիժը չի տուժէ բոլոր Զայաստան»: Այս ատենաբանութեան վրայ՝ իւրաքանչիւր ոք նոյն խօսքերը միեւնոյն կ'երպով կը կրկներ եւ նոյն դարմանը կը հեղեղէր,